ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«28» «մարտի» 2024 թ. № 96-Ն

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ՀԱՅՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «թ2» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել.

1) գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հայտի օրինակելի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2003 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 22-ի N 1380-Ն «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման լիցենզիաներ տալու և պայմանագրեր կնքելու կարգը հաստատելու մասին» որոշման կիրարկման մասին» N 84-Ն հրամանը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

3/28/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«28» մարտի 2024թ.

ք. Երևան

Հավելված N 1
Շրջակա միջավայրի նախարարի
2024 թվականի մարտի «28» -ի
N 96 - Ն հրամանի

ՀԱՅՏ ***Օրինակելի ձև***

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

_____
իրավաբանական անձի (անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրը) կամ ֆիզիկական անձի (անունը, ազգանունը, փաստացի բնակության վայրը, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը) տվյալները)

_____

_____
գտնվելու վայրը (մարզը, համայնքը)

_____
օգտագործման նպատակը

_____
օգտագործման ժամանակահատվածը

N	Կենդանական աշխարհի օբյեկտների տեսակը	Չափաքանակը (հատ, կգ)

Հայտին կից ներկայացվում է՝

1) գյուղատնտեսական նպատակով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման համար՝ Կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի N1276-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջվող տեղեկատվությունը,

2) արդյունագործական նպատակով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման համար՝ Կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի N1276-Ն որոշման հավելվածի 9-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը:

_____

_____

Հայտատու՝ _____
(անուն ազգանուն, ստորագրություն)

«----» ---------- 202 թ.

Հավելված N 2
Շրջակա միջավայրի նախարարի
2024 թվականի մարտի «28» -ի
N 96 - Ն հրամանի

Օրինակելի ձև

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ք. Երևան

«_____»_____2024թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը (այսուհետ՝ «Լիազորված մարմին»), հանդես գալով Կառավարության անունից, ի դեմս՝_____մի
(անուն, ազգանուն, պաշտոն)
կողմից և
_____
իրավաբանական անձի (անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրը) կամ ֆիզիկական անձի (անունը, ազգանունը, փաստացի բնակության վայրը, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը) տվյալները
_____
_____
(այսուհետ՝ «Կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործող») ի դեմս՝
_____
(անուն, ազգանուն)
_____

մյուս կողմից կնքեցին (այսուհետ միասին՝ Կողմեր) սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով լիազորված մարմինը կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողին իրավունք է վերապահում՝

_____ նպատակով,
_____ տարածքում,
(օգտագործման ենթակա տարածքի տեղադիրքը)
_____
_____ որսամիջոցով,
(տեսակը, նկարագիրը, քանակը)
_____
_____ ձկնորսով (ձկնորսներով),
(անձնագրի տվյալները)
_____ լողամիջոցներով,
կատարել _____ որս
(կենդանական աշխարհի օբյեկտի տեսակը և քանակը)

_____ թ-ից մինչև _____ թ. ընկած ժամանակահատվածում:

2. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Գյուղատնտեսական նպատակով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման համար իրավաբանական և ֆիզիկական անձինք (այսուհետ՝ հայտատու) լիազորված մարմին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները՝

2.1.1. կենդանական աշխարհն ուսումնասիրող սուբյեկտների կողմից տրամադրված ցուցումներ՝ հայցվող տեսակի վայրի բնությունից վերցնելու, տեղափոխելու, պահելու (այդ թվում՝ պահման վանդակների կամ ազատավանդակների չափերի ու առանձնահատկությունների, սննդակարգի, անհրաժեշտ սարքավորումների առկայության, տարածքի սանիտարահիգիենիկ պայմանների) վերաբերյալ,

2.1.2. պարտադիր անասնաբուժական զննումների և անհրաժեշտ անասնաբուժական միջոցառումների ժամանակացույցը՝ հաստատված անասնաբույժի կողմից,

2.1.3. սելեկցիոն գործընթացն իրականացնելուց առաջ նախնական անասնաբուժական զննություն կատարելու և կարանտինն ապահովելու մասին պարտավորությունը (զոոնոզ հիվանդությունների տարածումից խուսափելու նպատակով):

2.2 Սույն պայմանագրի 2.1 ենթակետով պահանջվող տեղեկատվությունը կնքվող պայմանագրի անբաժանելի մաս է և համարվում է պարտադիր կատարման ենթակա պահանջ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Լիազորված մարմինն իրավունք ունի՝

3.1.1. կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողից պահանջել օգտագործել սույն պայմանագրով սահմանված քանակի և տեսակի կենդանական աշխարհի օբյեկտներ,

3.1.2. դադարեցնել կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը՝ կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողի կողմից թույլ տրված խախտումները վերացնելու նպատակով,

3.1.3. պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը՝ դրա մասին ոչ ուշ քան 10 օր առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին,

3. 2. Լիազորված մարմինը պարտավոր է՝

3.2.1. կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողին տրամադրել կենդանական աշխարհի օբյեկտների պահպանության և օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն և խորհրդատվություն:

3.3. Կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողն իրավունք ունի՝

3.3.1. իր հայեցողությամբ տնօրինել սույն պայմանագրում նշված կենդանական աշխարհի օբյեկտները՝ պայմանագրի պայմաններին և նպատակին համապատասխան,

3.3.2. Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով իրացնել կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումից ստացված արտադրանքը և տնօրինել եկամուտները,

3.3.3. լիազորված մարմնի հետ համաձայնեցնելուց հետո իրականացնել կենդանական աշխարհի օբյեկտների բարելավման միջոցառումներ,

3.3.4. պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը՝ դրա մասին ոչ ուշ քան 10 օր առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

3.4. Կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողը պարտավոր է՝

3.4.1. գործել Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով,

3.4.2. կենդանական աշխարհի օբյեկտներն օգտագործել բացառապես սույն պայմանագրի պայմաններին և նպատակին համապատասխան,

3.4.3. պահպանել պայմանագրում նշված տարածքի կենդանական աշխարհի օբյեկտների տեսակային բազմազանությունը և չխախտել բնական միջավայրի ամբողջականությունը,

3.4.4. ապահովել կենդանական աշխարհի օբյեկտների շարունակական օգտագործումն ու վերարտադրությունը,

3.4.5. կենդանական աշխարհի օբյեկտներից օգտվելու հետևանքով խախտված էկոհամակարգը վերականգնել սահմանված ժամկետում,

3.4.6. ձկան և խեցգետնի արդյունագործական որս իրականացնելու դեպքում.

ա) չօգտագործել օրենսդրությամբ արգելված լողամիջոցներ և որսամիջոցներ,

բ) վարել գրանցամատյան, որտեղ կատարվում են գրանցումներ որսատարածքի, որսի ենթակա և որսված ձկան և խեցգետնի քանակի, տեսակի, ինչպես նաև պայմանագրով և ձկնորսության կանոններով նախատեսված այլ պայմանների ու պահանջների կատարման վերաբերյալ,

3.4.7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերով և կարգով հատուցել բնությանը պատճառած վնասները,

3.4.8. զերծ պահել մթնոլորտային օդը, հողը, անտառները, ջրերը և շրջակա միջավայրի մյուս օբյեկտները, ինչպես նաև շինությունները և այլ կառույցները, բնության, պատմության և մշակութային հուշարձանները կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից,

3.4.9. սույն պայմանագրի գործողությունն ավարտվելուց հետո մեկամսյա ժամկետում լիազորված մարմնին ներկայացնել հաշվետվություն՝ կենդանական աշխարհի օբյեկտների որսված քանակության և տեսակների վերաբերյալ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

4.1. Կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողը Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով վճարում է _____ դրամ բնօգտագործման վճար:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1.Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ծագած վեճերը լուծվում են դատական կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

7.1. Պայմանագիրը դադարում է կամ պայմանագրով սահմանված ժամկետը լրանալու կամ պայմանագրով սահմանված չափաքանակները սպառվելու դեպքում:

7.2. Լիազորված մարմնի կողմից սույն պայմանագիրը կարող է միակողմանի և վաղաժամկետ լուծվել, եթե կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործողը՝

7.2.1. կենդանական աշխարհի օբյեկտներն օգտագործել է օրենքի, իրավական այլ ակտերի կամ սույն պայմանագրի պայմանների կամ կենդանական աշխարհի օբյեկտների տրամադրման նպատակի խախտումներով,

7.2.2. լրիվ կամ մասնակիորեն հրաժարվում է իր պայմանագրային պարտավորությունների կատարումից,

7.2.3. կենդանական աշխարհի օբյեկտների տվյալ տարածքը վերցվում է պետական կամ հասարակական կարիքների համար,

7.2.4. ստեղծվել է ակնհայտ սպառնալիք կենդանական աշխարհի օբյեկտների բնական վերարտադրության, աշխատողների և/կամ բնակչության անվտանգության (առողջության) համար:

7.3. Նշված հիմքերով սույն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում լիազորված մարմինը որևէ գույքային պատասխանատվություն չի կրում:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

8.1. Պայմանագրի դրույթների փոփոխումը կատարվում է կողմերի գրավոր համաձայնությամբ: Կատարվելիք փոփոխությունները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում: Դրանք ձևակերպվում են լրացուցիչ համաձայնագրով, որը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

9. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագիրը կազմված է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկ օրինակ:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Պայմանագրի ժամկետը սահմանվում է «____» _____ թ-ից մինչև «____» _____ թ.:

11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենդանական աշխարհի օբյեկտներ օգտագործող	Լիազորված մարմին
_____	_____
_____	_____
(բանկային վավերապայմանները)	(բանկային վավերապայմանները)
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ